



## ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ



երմանացի նշանաւոր դիտնական անմահ ՚իէօթէն ՚չնորհակալութեանը անուանում էջ «Մի զեղցիկ օրէնք ագնիւսըտերի համար»:

Շնորհակալութիւն խօսքն իսկապէս նոյն նշանակութիւնը և նոյն իմաստն ունի մտածողութեան հետ, ինչոր ունին երախտագիտութիւն—երախտապարտութիւն և մտածմունք բառերը. որովհետև մտածել ոչ այլ ինչ է նշանակում, եթէ ոչ չնորհակալ լինել և երախտապարտ գտնուել դէպի մէկը. Այսպէս չնորհակալութիւնը, երախտապարտութիւնը մի բարոյական անդնահատելի փոփոխութիւն է, որը գաղափարից հատուցման է դարձած—փոփոխուած։ Շնորհակալութիւնը մարդկային ոգու գլխաւոր նշաններից մէկը լինելով, ամեն մի բանական մարդ պարտաւոր է չնորհակալ լինել։ Շնորհակալական և երախտագիտական բարձր բարոյական զդացմունքներով մարդս միջոց է ունենում արտայայտելու իւր որդիական ծառայութիւնը դէպի Աստուած և այսպիսով հատուցման գաղափար է առաջ բերում։ Շնորհակալութիւնը, երախտագիտութիւնը բոլոր աղգերի գլխաւոր

յատկութիւնն է կազմում. այս բառերը և նոցա գործադրութիւնը նոյն իսկ հեթանոսներին օտար չէր: Այսպէս օրինակ բարելացիք, վիւնիկեցիք, ասորիք... որոնք աւելի կրօնական բարձր աստիճանի վերայ էին կանգնած, երախտագիտական զգացումն էր ստիպում նոցա պաշտել, յարգել այն լուսատու մարմիններին, որոնցից յայտնի օգուտներ էին ակնկալում և ստանում. բացի այդ շատ երախտագիտ էին դէպի այն անձնաւորութիւնները, որոնք մի յայտնի գործ և կամ գեղեցիկ ընթացք էին ցոյց տալիս դէպի իրանց ազգը, հայրենիքը....

Խսկապէս ինքն իրան վեր առած չնորհակալութեան սկզբունքը իւր կատարելութեամբ ոչ այլ ինչ է, եթէ ոչ բրիստոնէական մի բարձր առաքինութիւն, զգաստութիւն և սրբութիւն: Ճնորհակալ լինել առանց աւետարանի միանգամայն աներեակայելի և անհասկանալի է, որովհետ և աւետարանն է սիրոյ, չնորհակալութեան, խոհեմութեան, չափաւորութեան, երախտագիտութեան և հեղութեան գեղեցիկ և վսեմ մեծ մատեանը:

Ճշմարիտ չնորհակալութեան սկզբունքը մարդուաստի մէջ յառաջ է բերում խոհեմութիւն, չափաւորութիւն, համեստութիւն, պարկեշտութիւն, խոնարհութիւն... Մարդս ընութիւնից ունենալով եսական նեղ ոգի և ինքնասէր ընթացք, յայտնի բան է ամեն մի տգեղ երևոյթնրա մէջ հաստատուն հիմք կ'ստանան, եթէ նախօրօք բարոյական վսեմ գաղափարներով չ'աշխատուի նրա ինքնասիրութիւնը մեռցնել և նրա տեղ նրա անձնասէր նեղ սրտում թագաւորեցնել սիրոյ և ընդհանուր համամարդկային ձգտումներ, գաղափարներ:

Որբան որ չնորհակալութեան զգացումը մի մարդու մէջ շատ է երեսում, նոյնքան նա գոհ է լինում իւր վիճակից, զրութիւնից և գոհ վիճակ ունեցողը չնորհակալութիւն արտայայտում և խաղաղութիւն, հանգստութիւն.

բերում իւր անձին։ Այս նպատակին մահկանացու մարդը առանց Աստուծոյ ոչ մի ժամանակ չի կարող հասնել Եւ այդ իսկ պատճառաւ ճշմարիտ դաստիարակութիւնը այն ժամանակ միայն կարող է իւր դործը կատարած համարել, երբ չի մոռանալ աճող և զարգացող սերնդին պարզ և յայտնօրէն ցոյց տալու, որ ամեն մի բարի և լաւ պարզե, ողորմութիւն դալիս է մեղ ի վերուստ մեր երկնաւոր Հօրից և այդ պատճառաւ պարտական նոր Նրան ամենից առաջ յայտնել, ցոյց տալ մեր երախտագիտութիւնը — չնորհակալութիւնը։

Ճնորհակալութիւնը դաստիարակութեան նպատակի մի մասը կաղմելով, ոգի, վատահութիւն է ներշնչում մարդուա մէջ և այսպիսով առաջ բերում իրազմակողմանի նպատակներ, ցանկութիւններ, գործեր, երախտագիտութեան զգացմունքը խաղաղութիւն, հանգստութիւն և անզորրութիւն է բերում մի անձի, մի ընտանիքի, մի հասարակութեան և մի ազգի։

Իրանց կեանրից, շրջապատող հանգամանկներից, երևյթներից գոհ և չնորհակալ եղող ազգերը ոչ մի ժամանակ չեն կարող յեղափոխականներ լինել. քանի որ նորա բարւոք և բաւարար վիճակ կեանք ունենալով նորանոր պահանջներ չեն ցանկանում ստեղծել և գնում են բանականութեան ուղիղ ճանապարհով. Խոկ այն ազգերը, որոնք իրանց արդի դրութեամբ և վիճակով գոհ չեն զգում իրանց, անկարող են չնորհակալ և երախտապարտ լինել. սոքա քնդհակառակը, իրանց անհանգիստ և նեղ վիճակով ձգտում են անբաւականութեան և անշնորհակալութեան բոլոր զօրութեամբ կռիւ մղել աշխարհի դէմ և հասնել իրանց ցանկալի և գոհ դրութեանը. Ամեն մի մարդ պէտք է ի բոլոր սրտէ չնորհակալ լինի Աստծուց, որ իրան ստեղծելով հանդերձ պարզեել է օգտակար և գեղեցիկ բնութիւն իւր բոլոր հրաշալիքներով,

բարիքներով։ Բացի այդ մարդս շատ պարտքեր ունի դէ-  
սլի այն հասարակութիւնը, որի մէջ ապրում է, դէպի  
այն ազգը, որին պատկանում է, դէպի այն կառավարու-  
թիւնը, որի հայրական խնամքն ու հոգատարութիւնն է  
վայելում, դէպի իւր բազմաշարշար գթառատ ծնողները,  
բարեգործները և վերջապէս դէպի այն եկեղեցին, որի  
ծոցում մկրտուել, ոնուել և դարդացել է թէ մտաւորա-  
պէս և թէ բարոյապէս։

Հնորհակալութեան զգացմունքը, ոգին մարդիկ ստա-  
նում են նախ իրանց ծնողներից մանկական հասակում և  
ապա ուշ՝ դպրոցում ուսուցիչներից, դաստիարակներից։  
Դա մի պարզ ճշմարտութիւն է, որ անշնորհակալ մար-  
դիկ շատ սակաւ են չնորհակալ և երախտապարտ զաւակ-  
ներ և կամ աշակերտներ ունեցել։ Շնորհակալութիւնը,  
երախտապիտութիւնը իրանց սկիզբն ընդունում են հայ-  
րենական-ընտանեկան օջախից։ Մանուկներն ինչ որ  
տեսնում են իրանց ծնողաց շրջանում, նոյնը ամենայն  
հեշտութեամբ ընդունելով իրանց մէջ նրան բնութիւն և  
կտղմ են տալիս։

Նշանաւոր մանկավարժ նեմայէրը մի շատ գեղեցիկ  
միջոց է առաջարկում երեխաների մէջ չնորհակալութեան,  
գոհութեան զգացում զարթեցնելու համար։ «Բարի ծնող-  
ները և կամ ազնիւ դաստիարակները պարտաւոր են  
փոքրիկ մանուկներին չնորհակալութիւն անել այն բոլոր  
դէպքերում, երբ նորա հարկը ստիպած ժամանակ մի որ  
և է ծառայութիւն կամ գործ են կատարում։ Եւ որով-  
հետեւ երեխաները, անշափահամները ամեն մի դէպք,  
գործ, խօսք թռուցիկ կերպով են ըմբռնում և ապա  
փոքր ժամանակից յետոյ հեշտութեամբ մոռացութեան  
տալիս, ահա այդ պատճառաւ կենդանի օրինակներն ա-  
ւելի գորեղ և տպաւորիչ լինելով աւելի ամրապնդում են  
նոդա միջի մի անգամ հիմք դրած բարեգործութեան,

երախտագիտութեան և չնորհակալութեան պարտքերը:

Այսպէս ընտանեկան յարկի տակ, սեղանի շուրջը, մասնաւոր խօսակցութեանց մէջ և թէ ամենուրէք ամենամիծ դաստիարակիչները՝ հայր, մայր չպէտք է մի բռպէ դադարեն ճշմարիտ և վսեմ սերմեր ցանել իրանց որդոց մատաղ և պարարտ սրտերում, որպէս զի յետոյ առատ պտուղներ և յայտնի մեծ օգուտներ ստանան: Ընտանիքների հետ կառավարութիւնը և եկեղեցին դարձեալ ունեն իրանց ուղղակի ազգեցութիւնը երեխանների, երի տասարդների բարոյական, մտաւոր և մարդասիրական կրթութեան և զարգացման գործում: Դոցանից ամէն մէկը աշխատում է իւր իսկական սահմանում իւր նպատակների համար:

Մանուկների համար ուսումնարանն աւելի մեծ հաստատութիւն և ընկերութեան կենգրոն լինելով քան ընտանիքը, նա աւելի միջոց, ձեռնհասութիւն և ոյժ ունի մատաղ սերնդին ընդհանուր համամարդկային նպատակներով, գործերով աւելի զբաղեցնելու և իւր ցանկալի նպատակին հասցնելու, քան ընտանիքը: Դպրոցում դաստիարակներն աւելի հիմնաւոր և գեղեցիկ կերպով, պարզ ու հասկանալի ձեռվ շնորհակալութեան սկզբունքները, երախտագիտութեան զգացմունքները, պարտքը կանոնաւոր բացատրելուց, մեկնելուց յետոյ հաղորդում են մանուկներին ի գործադրութիւն:

ԱՐՃԱԿ ԳՈՅ. ՄԻՆԱՍԵԱՆՑ

